

ԱՐՍԵՆ ԲԱԴՐԱՏՈՒՆՈՒ ԼԵԶՎԱԴԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՏՔՆԵՐԸ

Ա. Մ. ԹԵՎՈՍՅԱՆ

Արսեն Բագրատունին Մխիթարյան միաբանության XIX դարի առաջին կեսի ականավոր դեմքերից մեկն է։ Հայ հասարակայնությանը նա հայտնի է որպես նշանավոր բանաստեղծ, հայագետ, փիլիսոփա, թարգմանիչ։ Հարուստ ու բազմերանգ է նրա թողած ժառանգությունը։ Նրա գրչին են պատկանում տասնյակ պատմական ողբերգություններ, բանաստեղծություններ, հին ու նոր գրականությունից կատարված թարգմանություններ։ Նա «Հայկ Դյուցազն»-ի, ինչպես նաև հայկաբանությանը և փիլիսոփայությանը նվիրված մի շարք ուսումնասիրությունների հեղինակն է։

Լինելով Մխիթարյան միաբանության գործիչներից մեկը, նա, անշուշտ, բաժանել է այն ընդհանուր քաղաքական դիմքը, որը հատուկ է եղել այդ միաբանությանը։ Նա կլասիցիզմի ներկայացուցիչներից մեկն էր հայ իրականության մեջ, որի ստեղծագործություններում առկա էին կրոնա-իդեալիստական գաղափարախոսության բնորոշ կողմերը։ Չնայած այդ ամենին, պետք է նշել, որ նա չի եղել կրոնական խավարամիտ այն մտածողներից, որոնց դատողությունները կրել են սոսկ մտահայեցողական բնույթ և զուրա չեն եկել կրոնի ու եկեղեցու գաղափարախոսության շրջանակներից։ Գործելով Եվրոպայի կենտրոնում, ականատես լինելով պատմական խոշոր իրադարձությունների և միաժամանակ կրելով այդ դարաշրջանի լուսավորական մտքի ազդեցությունը, Բագրատունին մի շարք հարցերում պաշտպանել է այնպիսի տեսակետներ, որոնք չէին տեղավորվում կրոնա-իդեալիստական իդեոլոգիայի շրջանակներում և արտահայտում էին այլ մտայնություն։ Բագրատունու այդ ուշադրավ մտքերը, որոնք վկայում են նրա՝ որպես մտածողի աշխարհայեցողության մեջ տեղի ունեցող որոշ խմորումների մասին, իրենց զրոսկորումն են գտել հատկապես նրա «Սկզբունք ուղիղ խորհելոյ և բարօք կելոյ» աշխատության մեջ, որը լինելով նրա գործունեության վերջին շրջանի մտորումների հանրագումարը՝ զգալի հետաքրքրություն է ներկայացնում։

Այս աշխատության մեջ բացի փիլիսոփայական, սոցիոլոգիական, էթիկական և տրամաբանական բնույթի խնդիրներից, հեղինակը քննության է առել նաև լեզվի վերաբերյալ փիլիսոփայական մի շարք հարցեր, որտեղ արտահայտել է բավական հետաքրքիր մտքեր։ Այդ հարցերի լուսաբանմանն էլ նվիրված է հենց սույն հոդվածը։

* * *

Իր «Սկզբունք ուղիղ խորհելոյ և բարօք կելոյ» աշխատության մեջ Ա. Բագրատունին արծարծել է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ լեզվի և մտածողության փոխհարաբերությունը, լեզվի հասարակական ֆունկցիան, նրա դերը իմացության մեջ, լեզվի և մտածողության ծագման ու զարգացման խնդիրը և այլն։ Դրանք լուծելիս նա հիմնվել է ժամանակի գիտության տվյալների վրա և ցուցաբերել քննադատական մոտեցում։

Անդրադառնալով լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցին, նա գրել է. իմանալ որևէ բան, նշանակում է իմացածն արտահայտել որոշակի գաղափարների ու դատողությունների միջոցով։ Իսկ վերջինս կլինեն անհնար, եթե այդ պրոցեսին չմասնակցեր լեզուն, որը ներկայացնում է զգայական նշանների սխեմա. «Լեզուն կամամտածական առավելապես ի ձայնական նշանակաց կառմեալ կայ», այն թի ձայնից յօղանա»¹։ Իմացության արդյունքները ֆիքսելով բառերի և նրանց համապատասխան կապակցությունների՝ նախադասությունների մեջ, լեզուն, ինչպես նշել է նա, հնարավորություն է տալիս մարդկանց արտահայտել իրենց մտքերը, փոխադարձաբար հաղորդակցվել միմյանց հետ։

¹ Ա. Բագրատունի, Սկզբունք ուղիղ խորհելոյ և բարօք կելոյ, Վենետիկ, 1857, էջ 50։

Սակայն Ա. Բաղրատունու կարծիքով իմացության պրոցեսում մարդիկ հաղորդում են ոչ միայն իրենց պատրաստի մտքերը, այլև խորհում, դատողություններ են անում շրջակա իրերի ու երևույթների վերաբերյալ: Խորհելու պրոցեսը, որը նրա պատկերացմամբ դատողությունների կոմբինացման ու նրանցից նոր հետևություններ հանելու գործունեություն է, նույնպես ընթանում է լեզվական բառամթերքի, նշանների հիման վրա:

Արտաքին աշխարհից ստացված տպավորություններն սկզբից ենթ նշանակելով համապատասխան բառ-նշաններով, մարդիկ մտածում են ոչ մերկ զաղափարների, դատողությունների, այլ բառերի և նախադասությունների միջոցով:

Որ իրոք լեզուն նա դիտել է իր երկու հիմնական ֆունկցիաների մեջ մտածողության պրոցեսում, դա երևում է նրա հետևյալ արտահայտությունից. «Լեզուն կարևոր պիտոյ է մեզ ոչ միայն ի հաղորդել զգալափարս մեր, այլ և ի յօրինել և յօղաւորել»²:

Բայց լեզուն քննել իր երկու ֆունկցիաների մեջ, նշանակում է ելնել մտածողության և լեզվի միասնության զաղափարից, այն բանից, որ ինչպես լեզուն գոյություն չունի առանց մտածողության, այնպես էլ մտածողությունը՝ առանց լեզվի: Հակադրվելով այն մտածողներին, որոնց կարծիքով խորհելու պրոցեսում կարելի է յուր զնալ առանց լեզվի, նա նշել է, որ նրանք պարզապես զրադվում են ինքնախարեությունում: Ահա ինչ է դրել նա այդ մասին. «Թէ պէտ է իցեն՝ որ զանձինս բաւականս համարիցին ի մտածել և խոհրետիր լինել մտավորարար եւթ, առանց ինչ բառից ի նոյն նպաստ լինելոյ. բայց հավանելի է թէ անձամբ զանձինս խաբենձ»:

Որ իրոք առանց լեզվի մտածելու վերաբերյալ տեսությունը դիտական չէ, Բաղրատունու կարծիքով հաստատվում է մարդկանց ճշող մեծամասնության պրակտիկայով: Սրանք, ինչպես իշել է նա, որպես կանոն մտածում և իրենց մտքերը հաղորդում են լեզվի միջոցով: «Գոնէ հավաստի է,—դրել է Բաղրատունին,— թէ բազմաց ոչ է այդ կարողութիւն (իմա՝ առանց խոսքի մտածելու կարողությունը—Ա. Թ.)»³: Եվ ապա զարգացնելով իր այդ միտքը, նա նշել է, որ անգամ այն ժամանակ, երբ մարդիկ մտածում են մեկուսի, այսինքն լռելիայն, դարձյալ նրանց ներքին խոսքը ընթանում է լեզվական նշանների՝ բառերի հիման վրա: Նրա կարծիքով ներքին խոսքը անհրաժեշտարար կապված է այն բանի հետ, որ մարդիկ գործադրում են հազիվ նշմարելի արտաբերական հնչյուններ՝ շրթունքների, լեզվի, ձայնական կապերի միջոցով: Դրանում, ինչպես նկատել է նա, կարող է համոզվել ամեն ոք, եթե ուշադրությամբ հետևի իր մտքերի ընթացքին. «Գոնէ հավաստի է, թէ բազմաց ոչ է այդ կարողութիւն, որ ոչ միայն զբառսն ի պէտս առնուչն խորհելոյ, այլ և յաճախ կրկնեն զայնս յինքնանս ցած ձայնիւ, երբ լեմն և բարձր, իբրև զուշ մտացն յառել կամիցին: Սգտէ յայնժամ զաղափարն բառիւն նշանակեալ՝ բախելով զգալութիւն լսելեացն: Իսկ յորժամ ի գիր նլանիցէ, առաւել ևս օգնէ՝ ընդ տեսանելեացն զգայարանս հարկանելով: Եվ որ կուրացնալքն իցեն՝ փորձ են այդմ գորութեան և վնասու զրկանացն»⁴:

Բաղրատունին լեզվի և մտածողության փոխհարաբերության մասին ունեցած իր այդ ճիշտ հայացքն աշխատել է կիրառել նաև նրանց առաջացման պատմական պրոցեսի նկատմամբ:

Նրա կարծիքով լեզուն և մտածողությունը պատմականորեն առաջ են եկել միաժամանակ, կազմել են մի միասնական, ամբողջական պրոցես: Այս կապակցությամբ սույն պրոբլեմի մեջ նա նշմարել է իրար ներհակ երկու տեսություններ, աշխատել է վեր հանել նրանց միակողմանի բնույթը: Այս տեսություններից մեկի էությունը նրա կարծիքով կայացել է նրանում, որ իբր մարդիկ ի սկզբանե նախ՝ գործառել են մերկ զաղափարներով և ապա միայն, որոշ ժամանակ անց, մտածողության պահանջներից զրդված ստեղծել են համապատասխան բառեր, լեզվանշաններ: Թեև Ա. Բաղրատունին ուղղակի չի ասել, սակայն նրա առարկություններից պարզ հետևում է, որ այս ուղղության ներկայացուցիչների կարծիքով մարդիկ եթե նախապես չստեղծեին զաղափարներ, ապա չ'ը լինի և լեզվի պահանջը, որ լեզվական նշանները, բառերը իրենց գոյությամբ պարտական են մտածողությանը, պայմանավորված են նրա գոյությամբ:

Հակադրվելով այդ մտայնությանը, Ա. Բաղրատունին իր աշխատության 8-րդ գլխում ուղղակի գրել է. «Բայց չէ հաւանելի, որպէս ասացին ոմանք, թէ բացէ ի բաց հարկաւորք իցեն

2 Նույն տեղում, էջ 56:

3 Նույն տեղում, էջ 61:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

առ սկսանել խորհիլ, Զի թէ չէին մեր կանխաւ լեալ գաղափարք, և ոչ նշանաց ի խնդիր լինէաք ստեղծանելոյ»⁶։

Ա. Բազրատունու կարծիքով նման պնդումը չի կարելի գիտական համառել, որովհետեւ այն ելնում է ոչ թե լեզվի և մտածողության միասնության, նրանց միաժամանակյա առաջացման գաղափարից, այլ լեզվի և մտածողության միմյանց հակադրումից, նրանց միաժամանակյա առաջացման պատմական պրոցեսի խեղաթյուրումից։

Նա մերժել է նաև այն կարծիքը, համաձայն որի լեզվական նշանների առաջացումը նախորդել է մտածողությանը, որ իբր հաղորդակցության պրոցեսն սկզբնական շրջանում ընթացել է առանց գաղափարների։ Ցույց տալով, որ նման պնդումը գիտական չէ, ի վերջո նա հարցնում է. և՞թե իրոք մարդիկ ի սկզբանե հաղորդակցվել են առանց գաղափարների, ապա ի՞նչ էին ներկայացնում իրենցից այն ժամանակ լեզվական նշանները։ Զէ որ իմաստազուրկ նշանների միջոցով մարդիկ չէին կարող հասկանալ միմյանց, իրականացնել իրենց համատեղ գործունեությունը։ Այդ մասին նա գրել է հետևյալը. «Եվ ոչ դարձեալ հավանութեան ինչ է, թէ իբրև գամ մի հնարեսցին նշանքն՝ յառաջոյ իսկ գաղափարաց և կամ առանց նոցին իսկ ընթանայցեն։ Զի ի՞մ իմիք նշանք իցեն յայնժամ»⁷։

Այսպիսով, անկասկած է, որ Ա. Բազրատունին լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցում կանգնած է եղել գիտական տեսակետի վրա։

Անհրաժեշտ է նշել, որ լեզվի և մտածողության փոխհարաբերության մասին ունեցած իր այդ հայացքով նա կանխել է իր ժամանակակիցներից շատ շատերին։

Ա. Բազրատունին լեզուն համարել է հաղորդակցության կարևոր միջոց։ Շնորհիվ լեզվի, ինչպես նշել է նա, մարդիկ ոչ միայն փոխանակում, իմանում են միմյանց մտքերը, այլև փոխադարձաբար կապվում են միմյանց հետ, կարգավորում են իրենց համատեղ գործունեությունը։ Ելնելով լեզվի հիմնական՝ հաղորդակցության ֆունկցիայից, նա լեզվի ծագումն ու զարգացումը կապել է հասարակության հետ։ Լեզուն հասարակական դաշինքի արդյունք է և որպես այդպիսին առաջ է եկել հասարակության պահանջով, մարդկանց՝ իրար մի բան ասելու կարիքից. «էակ կենդանի շնչավոր՝ ընդ իմանալն թէ կան այլ ևս իբրև զենքն զգայուն և կամեցող էակք, ապաքէն զգայ զանձուկ և զկարօտ հաղորդելոյ նոցա իմաստս իւր և զզգացմունս, թէպէտ ի հեշտութիւն ևեթ աղապատանաց ընդ նոսա, և թէ առ յինքն յանկուցանել զկամս նոցա, կամ գոնէ արգելուլ զայն առ ի չվնասելոյ անձին իւրում։ Այսպիսի էր մարդս յառաջնում անդ վիճակի աստուածազոյգ ընտանութեան առն և կնոջ»⁸։

Անցնելով այն գլխավոր հարցին, թե ինչ տեղ ու դեր ունի լեզուն իմացության մեջ, Բազրատունին նշել է, որ լեզուն, լինելով զգայական նշանների սիստեմ, ֆիքսում է առարկաներից ստացված տպավորությունները և դարձնում իշողության սեփականություն։ Նրա վկայմամբ, եթե չլինեիր լեզուն, ապա մարդիկ չէին կարող ոչ միայն պահել, այլև ամրապնդել գաղափարները հիշողության մեջ, վերարտադրել և օգտագործել դրանք մտածողության մեջ։ Գաղափարները, եթե ամուր կերպով չկապվեին որոշ նյութական հնչյունների հետ, գրել է Ա. Բազրատունին, կկորչեին մտածողության օվկիանում։ Բայց բանը միայն այդ չէ։ Բազրատունու կարծիքով լեզվի դերը իմացության մեջ կայանում է նաև նրանում, որ նրա օգնությամբ մենք մտքի օբյեկտները մտովին տրոհում, առանձին, նման հատկանիշների հիման վրա դասակարգում ենք։ Լեզուն այս տեսակետից նա դիտել է որպես մտքի վերլուծության գործիք։ Ահա և փաստը. «Այնպիսի եմք մենք անդատին ի բնէ ստեղծուածոյս, թերևս և այլ ըզգայունք, զի ի ստանալն զգաղափար ինչ, եթէ ոչ փութով կապիցեմք զնա զգալի նշանի, փախչի ի մէնջ վաղվաղակի. և չկարեմք՝ ոչ յիշել զայն ըստ կամս, ոչ պահել ի մտի՝ առ ի մանր կրկտել զայն, լուծանել և առնել զնմանէ խորախորհուրդ բնութիւնս։ Վասն որոյ զգալի նշանակքն՝ ընդ որս ամենայն գաղափարք մեր կապեալ են, յոյժ կարևոր են մեզ ի յօբինել յօղավորել զնոսա, ի կազմել նորօք խումբս խումբս որ մի մի նոր պաղափարք իցեն, և առ ի զնորսն զայն գաղափարս մեզ յանդիման կացուցանել։ Վասն որոյ բազում ինչ զօրութիւն է նոցա ի վերայ գործոց մտացս. և դմին այդր իրի աղապաւ պարտ է մեզ աստանօր զնորօք գալ. այլ ոչ եթէ և ի դոյն աղապս ստեղծեալք ինչ իցեն ի բնէ»⁹։

6 Նույն տեղում, էջ 62։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 47։

9 Նույն տեղում, էջ 46—47։

Ուսկայն լեզվի դերն իմացության մեջ միայն վերոհիշյալով չի սահմանափակվում։ Բազրա-տունու կարծիքով լեզուն կարևոր միջոց է նաև մտածողության անմիջական գործունեությունը ապահովելու համար։ Եթե բառերի միջոցով մարդիկ չկարողանային նշանակել արտաքին առար-կաները, ապա հնարավոր չլի լինի մտածել։ Լեզուն ոչ միայն պայմանավորում է մտածողության գործունեությունը, այլև օգնում է նրան նյութականացնել իր վերջնական արդյունքները, որոնք խտացվում են հասկացությունների մեջ։ Այս կապակցությամբ նա գրել է, որ «չիք նոցա (ընդ-հանուր զաղափարներ—Ա. Թ.) ի միտս մեր այլ ինչ յորյննուցուն՝ բաց ի բառէն որ՝ զնոսա յան-դիմանէ, վասն որոյ վաղանցուկ յոյժ են. և ընդ կերպանալն պակասլին արդեօք իրրև զայնս՝ զորս հանապազօր ստեղծանեմք առանց անուն ինչ սեփականելոյ նոցա։ 'Իարձեալ, զի բառք ի ձայնից յօղեալք՝ տան նոցա զյատկութիւն զգայութեանց, խոր իմն ազդումն առնելով ի մեզ, որով դիւրի յիշատակ նոցին»¹⁰։

Բառը, ըստ Բազրատունու, ունի նաև ընդհանրացնելու հատկություն. նրա օգնությամբ մար-դիկ մտածում են ոչ թե առանձին, այլ եղակի առարկաներից ստացված տպավորությունները խմբերով. «Փորձիմ իմանամք ամենեքեան,—գրել է նա,—դի յորժամ զկոյտ մի զաղափարաց ընդ միով բառիւ ամփոփեմք, կոյտն այն միահամուռ՝ լինի մեզ մի եւթ զաղափար՝ որ դիւրաւ ենթակայ լինի այլոց դատմանց, և նովաւ հեշտեաւ կազմեմք այնուհետև զաղափարս նորս։ Այն-պէս հավաստի է այդ, զի ոչ երբեք խորհիմք ինչ առանց բառից նպաստավորութեան»¹¹։

Լեզուն դիտելով որպէս զգայական նշանների սիստեմ, Ա. Բազրատունին վերջինս համարել է նաև կարևոր միջոց ուրիշների մոտ համանման զաղափարներ արթնացնելու համար։ Գաղա-փարները, ինչպես նշել է նա, մտածողության մեջ չեն արթնանում առանց որևէ պատճառի։ Հաղորդակցության պրոցեսում նրանք մարդկանց մտածողության մեջ արթնանում են այն ժա-մանակ, երբ բառերը, փոխարինելով արտաքին առարկաներին, ներգործում են մարդկանց զգա-յարանների վրա։ Այս տեսակետից բառերը սոսկ ինչ-ուր նյութական հնչյունների կոմպլեքսներ չեն։ Նրանք արտահայտում են նաև որոշակի նյութական իմաստ։ Նրանք ոչ միայն անվանում, այլև պարունակում են որոշակի գիտելիքներ արտաքին առարկաների մասին։ Երբ նրանք ներ-գործում են մարդկանց զգայարանների վրա, վերջիններս մոտ առաջ են բերու՝ այն պատկեր-ները, զաղափարները, որոնք ամրապնդված են եղել այդ բառերի տակ։ Քիչաց զաղափար ոչ այն-պիսի ինչ է՝ զի ղէպ ուղիղ առանց իրիք միջնորդի ի միոյ յայլ էակ անցանել կարիցէ. ինքնին եներթին ինչ է ամենեկն և անփոխանցելի։ Ապա առ ի հաղորդել զգայուն էակի զաղափար իւր յայլ էակ զգայուն, պարտ է նմա ազդել ինչ ի զգայարանս նորա՝ որ զզաղափարն զայն նմա ի դէմս ածիցէ»¹²։

Վերջապես, լեզվի իմացության պրոցեսում ցուցաբերած կարևոր կողմերից մեկն էլ Բազրա-տունին տեսել է նրանում, որ լեզուն, զրանցելով մարդկային իմացականության արդյունքները, հնարավորություն է տալիս ոչ միայն պահպանել, այլև փոխանցել այն սերնդե-սերունդ, դարձնել ապագա սերունդների սեփականությունը։ Այս տեսակետից նա լեզուն դիտել է որպէս մի կենդանի հիշատակարան, որի օգնությամբ կարելի է ուսումնասիրել տվյալ ժողովրդի մշակույթը, մտա-ծողության եղանակը և այլն։ Նրա կարծիքով լեզվի իմացական ֆունկցիան ավելի է մեծանում, երբ հնչյունային լեզվի զարգացման որոշակի փուլում հանդես է գալիս զրավոր խոսքը, տպագրական արվեստը և այլն։ Այդ մասին ահա թե ինչ է գրել նա. «Յաճախութիւն գրոյ, մանավանդ տպագրու-թեան, մեծ զգուշութիւն է յնրեւաց դիւրաշարժ փոթորկաց պերճարանութեան, ևս առավել ժողո-վրդական ճարտարխոսութեան։ Թող զի և նա ինքն է հօրազոյն ի հնարս հրահանգաց վարժից և հաղորդակցութեան, և միայն յիշատակարան՝ յարձանադրել և յամրի պահել զգործս մեր և զխոր-հուրդս ի դարս դարուց»¹³։

Ա. Բազրատունին զրադվել է նաև լեզվի ծագման հարցով. որի լուծման ժամանակ նա հիմն-վել է XVII—XVIII դարերի եվրոպական լուսավորիչ մտածողների, ինչպէս նաև ժամանակի առա-ջադեմ լեզվաբանների տեսությունների վրա։ Անշախ այն բանից, թե ինչպիսի լուծում է տվել նա քննարկվող խնդրին, այնուամենայնիվ, լեզվի նրա ուսմունքի համար որպէս դրական կողմ պետք է նշել, որ նա բավականաչափ հեռու է եղել լեզվի ծագման կրոնա-քրիստոնեական ըմբռնումից և լուրջ կերպով հակադրվել է դրան։ Ուղղախոհության արվեստի հարցերի քննարկման ժամանակ Բազրատունին սահմանափակել է աստվածաբանության իրավունքները և գտել, որ աստվածա-

10 Նույն տեղում, էջ 57։

11 Նույն տեղում, էջ 61։

12 Նույն տեղում, էջ 47։

13 Նույն տեղում, էջ 61—62։

րանությունը չպետք է խառնվի դրանց լուծման մեջ. այդ նույն կերպ է վարվել նաև լեզվի ծագման հարցը բնականաբար ի հակադրություն լեզվի առաջացման կրոնա-քրիստոնեական բմբռնման, նաև լեզվի ծագումը տեսել է հասարակության մեջ: Լեզուն հասարակական պայմանավորվածության, դաշինքի արդյունք է, հանդիսանում է մարդկանց ստեղծագործությունը: Ինչպես մարդիկ մեհարանելով ստեղծել են հասարակություն, այնպես էլ համախմբվելով միմյանց հետ, պայմանավորվել են, որ «այս ինչ աղղումն նշանակ իցէ այս ինչ զաղափարի»¹⁴, — դրել է Ա. Բաղրատունին: Այլ կերպ ասած՝ առարկաների անվանումները մարդիկ տվել են ելնելով փոխպայմանավորվածության սկզբունքից:

Բայց այստեղ առաջանում է մի կարևոր հարց. ինչպես կարող էին մարդիկ առարկաներին անուններ տալ, եթե նրանք նախապես ծանոթ չեն եղել այդ առարկաների հատկանիշներին, եթե այդ առարկաների դրական կամ բացասական կողմերի մասին նրանք չեն ունեցել համապատասխան գաղափարներ: Ավելին, երկու կողմերը ինչպես կարող էին առարկաներին տալ անուններ, առանց այդ առարկաների մասին նախապես միևնույն գաղափար ունենալու, առանց իրենց իմացության արդյունքները փոխանակելու միմյանց հետ: Ուրեմն մնում է ենթադրել, որ մարդիկ մինչև հողաբաշխ լեզվի երևան գալը կամ հաղորդակցվել են առանց լեզվի և կամ էլ հողաբաշխ լեզվին նախորդել է ինչ-որ մի շրջան, որտեղ մարդիկ հաղորդակցվել են միմյանց հետ արտահայտչական ինչ-որ ձևերով:

Մերժելով այդ ենթադրություններից առաջինը, Բաղրատունին հաստատապես կանգնել է երկրորդ տեսակետի պաշտպանության վրա: Նրա կարծիքով այն հանգամանքը, որ նախամարդիկ հասարակական դաշինքի միջոցով ստեղծել են «կամամտածական» կամ «արհեստական» լեզու, դա դեռևս նշան չէ աշխարհի, որ մինչև հողաբաշխ լեզվի երևան գալը նրանք չեն հաղորդակցվել միմյանց հետ որևէ «լեզվով»: Քանի որ նրա համոզմամբ գոյություն է ունեցել այդպիսի «լեզու», ուստի դաշնագրության հետևանքով առաջ եկած արհեստական լեզուն նա պայմանականորեն չի իրտել ուրիշ լեզվի իսկական սկիզբը. «ապա այդ դաշն՝ ղլինելոցն իրրև զյառաջագոյն եղևալ պահանջելով, չմարթէ սկիզբն լինել լեզուի»¹⁵: Ավելին, ինչպես նշել է նա. «Եվ զաղափարացս չգոյր ունել նշանս ինչ կամայականս և դրականս, եթէ չկային նոցա կանխավ հարկաւորք և բնականք»¹⁶:

Բաղրատունու հավաստիացմամբ արհեստական լեզվին, որը կրում էր պայմանական բնույթ, նախորդել է այսպես կոչված «բնական» կամ «գործնական» լեզուն, որի հիմնական կոմպոնենտները հանդիսացել են ձայներն ու շարժումները: Գործնական լեզուն, ինչպես նշել է նա՝ «ձևաձայն... ի շարժումոց և ձայնից»¹⁷:

Անդրադառնալով գործնական կամ բնական լեզվի առանձնահատկությանը, Բաղրատունին նշել է, որ այդ լեզուն շատ հեռու էր սովորական, խոսակցական, մարդկային լեզու լինելուց: Լեզվի այդ տարրերը՝ ձայները և շարժումները առաջ են եկել նախամարդու հետ միասին: Նրանց միջոցով մարդիկ արտահայտում էին ոչ թե առարկաները, այլ նրանցից ստացված զգացմունքները: Այդ լեզուն ցավից, երկյուղից, ուրախությունից, տխրությունից և այլ զգացմունքներից արձակված բնազդական շտաբրորոշված ճիշերն էին, որոնք միևնույն արձագանքներն էին գտնում ուրիշների, այսինքն՝ իրենց համացեղակիցների մոտ: Այդ ճիշերը, ձայնարկությունները, ինչպես ևշում է Ա. Բաղրատունին, հետագայում ընկան հողաբաշխ կամ արհեստական լեզվի հիմքում: Որը մարդիկ դաշինքի հետևանքով սկսեցին առարկաներին անուններ տալ, նրանք այդ անվանումների հիմքում դրեցին այն զգացումները, որ նրանք ստացել էին առարկաներից և որոնք բոլորի մոտ նույն բանն էին նշանակում: Ահա ինչ է գրում նա այդ մասին. «Այնուհետք զի գործքս արգասիք են եղելոցն ի խորհուրդս, նովին և նշանակք են նոցին: Իրրև կամի որ առ ինքն մերձեցուցանել ինչ կամ հեռացուցանել, կարկառէ զբազուկսն առ ի ձգել զայն կամ մերժել. ուստի այն շարժմունք յայտ առնեն՝ թէ այրն այն ցանկայ իրին յոր ձկտի, կամ թէ հերքէ զայն: Յորժամ նոյն ալր ուրախութեամբ զգածեալ իցէ կամ ցաւով կամ երկիվղիւ, ձայնս արկանէ, և ձայնս պէսպէս ըստ երից կրիցն. ուրեմն այն ձայնք յայտ առնեն որով կարեօք զգածեալ իցէ: Վասն որոյ շարժմունքն այն և ձայնք՝ բնական և հարկավոր նշանք են զգացմանցն յորոց ծնանին, և զայնս անշուշտ ի դէմս ածեն այլում ումեք՝ որ զնոյնս զգայցէ, և փորձով գիտիցէ՝ թէ նոյնպիսի անցք և

¹⁴ Նույն տեղում, էջ 47:

¹⁵ Նույն տեղում, էջ 47:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 50:

րնդ ինքն անցանեն, յորժամ նոյնպիսի կարեօք զգածիցիս՝ Թ. Շարունակելով իր այդ միտքը, Բագրատունին այնուհետև ցույց է տվել, որ «Այսուհետև հասանել մարդս՝ թէ են և այլ էակք զգայունք և խորհնցողք իրրև զինքն. զի տեսնալ թէ զնոյն զործեն՝ զոր ինչ ինքն ի մտածութիւնս ինչ և ի կիրս, ի վերայ բերէ թէ համակարիք են: Այսպէս ընդ առնուլն ի միտ՝ թէ են էակք զգայունք, անդէն առ ձեռն ունի զտարերս հաղորդակցութեան ընդ նոսա. և ի կամելն յայտնել զոր յինքն կրի՝ առանց իրիք դաշին կարէ առնել ինքնին զնոյն զործս, զոր առնէր ի լնուլ զկամսն կամ ի հպատակել կարեացն»¹⁹:

Ընդգծելով այն հանգամանքը, որ նախասկզբնական «լեզուն» իր բնույթով եղել է զգացական, նա միաժամանակ այն միտքն է արտահայտել, որ այն հատուկ է եղել նաև բարձր զարգացման հասած կաթնասուն կենդանիներին. «Այս ամենայն,—գրել է նա,—որպէս դմարդկանէ, հավաստի է և զայլոց կենդանեաց: Է և նոցա ամենեցուն լեզու հասարակաց, մի քանի զմի բնդարձակ՝ ըստ յարմարելոյ կազմուածոց նոցա ի յայտնութիւն զգացմանցն, և մի քան զմիւս մանրապատում՝ ըստ չափոյ նմանութեան բնութեանց նոցին: Ամենեքեան իմանան զմիտս հոմացնդիցն, իսկ զայլասեռիցն՝ չափ և եթ»²⁰:

Կանգնած լինելով էվոլյուցիոն զարգացման տեսակետի վրա, նա այն միտքն է պաշտպանել, որ ձայնարկութիւնները, ճիշերը փոխարկվեցին հողարաշխ լեզվի ոչ միանգամից: Պահանջվեցին երկար տարիներ, մինչև զործնական լեզուն, ենթարկվելով բազմակարգ փոփոխութիւնների, վերածվեց իմաստալիւն լեզվի. «Նոյն զետէ բազմակարգ փոխաձևութեանցն տողան՝ որով ձայնք ի լեզու դառնան»²¹,—գրել է նա: Այս առումով նախամարդկանց համեմատելով կենդանիների հետ, նա նշել է, որ լեզվի զարգացման տեսակետից վերջիններիս մոտ նման էվոլյուցիա չի նկատվել: Նրանք մնացել են բնութիւնից տրված զործնական լեզվի շրջանակներում: Իսկ թե ինչ պայմանների ազդեցութեան տակ մարդիկ կատարելագործեցին իրենց լեզուն, հանգեցին հողարաշխ լեզվի անհրաժեշտութեանը, այդ մասին Ա. Բագրատունին որոշակիորեն ոչինչ չի պնդել. «Բայց քաջակազմէն իսկ ի կենդանիս ոչ թուին գրեթէ բնաւ լծորդել յայտնի ինչ դաշն ընդ բնական և հարկաւոր լեզուին. ի վար միայն արկանեն զայն բնութեամբ, և ոչ կատարելագործեն: Իսկ մարդ ի վերայ հիմանդ այդորիկ կառուցեալ է բազում ազգի ազգի կարգս այնպիսի բազմամանուած արուեստաւոր և յոկ կամայական նշանակաց, զի ոչ ևս դիւրին է զառաջին սկիզբն նոցա ի վեր բերել և զծննդակարգսն»²²:

Սակայն, ինչպես նշում է Բագրատունին, հնչյունական լեզուն, փոխարինելով զործնական լեզվին, միանգամից չհրաժարվեց նրա տվյալներից: Մնունդ առնելով նրանից, հնչյունական լեզուն դեռևս երկար ժամանակ հանդիս եկավ զործնական լեզվի հետ միասին, օգտվեց նրա զինանոցից: Նվ դա նրա կարծիքով միանգամայն հասկանալի է, որովհետև հնչյունական լեզուն չունէր դեռևս արտահայտչական լայն հնարավորութիւններ: Բառապաշարի տեսակետից այն չափազանց աղքատիկ էր: Միայն հետագայում էր, որ, ինչպես նշում է Ա. Բագրատունին, հնչյունական լեզուն ստացավ գերակշռութիւն զործնական լեզվի համեմատութեամբ: Անդրադառնալով սկզբնական լեզվի բնութագրին, Բագրատունին նշել է, որ այն իր բնույթով դիֆուզ էր, ուներ բառ-նախադասութեան նշանակութիւն. «...Ձայնքս նախուստ յայտ ածեն ամբողջ բան յայտարարական, որպէս ի բարբառս մեր ձայնքն՝ ձայնարկութիւն ի քերականաց ասացեալք, նա և այլք ևս՝ որոց շտան զայդ անուն, թէպէտ և արժան էր, զի նոյն զործ է և նոցա. օրինակ իմն ալո, ոչ, և այլն. զի այո՝ ասել է հավանում, այդ այդպէս է, իսկ ոչ ուրանամ, չէ այդ այդպէս: Ապա առաջին օրինակ խօսից՝ ձայնարկութեանցն է, որ մէկ մի յայտարարական բան ի մէջ բերեն»²³:

Այսպիսով, անկասկած է, որ Ա. Բագրատունու կարծիքով սկզբնական բնական ճիշերը ենթարկվելով փոփոխութիւնների և ապա զիտակցվելով, հետագայում դիտվել են որպէս ամբողջական նախադասութիւնների արժեք ունեցող միավորներ:

Սակայն նրա պնդմամբ լեզվի զարգացումն այդ աստիճանի վրա չի մնացել: Հետագայում պատմական զարգացման ընթացքում ամբողջական բնութի բարդ նախադասութիւններից աստիճանաբար առանձնանում են գոյականներն ու բայերը: Ընդ որում, եթե գոյականները սկզբում հատուկ անունների արժեք ունեին, ապա բայերը՝ անորոշ զերբայի: Նրա կարծիքով

18 Նույն տեղում, էջ 48:

19 Նույն տեղում, էջ 62:

20 Նույն տեղում, էջ 49:

21 Նույն տեղում, էջ 51:

22 Նույն տեղում, էջ 49:

23 Նույն տեղում, էջ 51—52:

միայն հետազայում է, որ բայերը լրացվում են ժամանակներով, եղանակներով, թվերով, դեմքերով: Ինչ վերաբերում է վերացական անուններին, ապա վերջիններս Բագրատունու համոզմամբ առաջ են եկել համեմատաբար ավելի ուշ ժամանակաշրջանում: Լոկկին հետևելով, նա վերացական անունների հիմքում գնում է եզակի անունները և գտնում է, որ դրանք առաջ են եկել եղակիներին: «Ստեղծանեմք նույնպէս ձայնս կա՛մ միավանկս առ ի ցուցանել զամենայն իր զգալի, որչափ ինչ միանգամ շարժուածովքս ի յայտ բերիցեմք. և այս բառք լինին նոցա առանձինն սեփական անուանք: Ապա այնուհետև ընդհանրացուցեալ զնոսա, լինին անուանք զասուց, սեռից և տեսակաց: Կարեմք տալ նույնպէս այլ և այլ հանգամանաց իրաց անուանս՝ որք լինին մասնաւորք և ապա դառնան յընդհանուրս»²⁴:

Ամփոփելով Ա. Բագրատունու մտքերը լեզվի ծագման վերաբերյալ, կարելի է նշել հետևյալը: Անշուշտ ճշմարիտ է Բագրատունին, երբ հակառակ լեզվի ծագման կրոնա-իդեալիստական տեսության, լեզվի առաջացումը դիտել է որպես կենդանական հասարակության հատուկ ձայնական ազդանշանների անմիջական և հետևողական շարունակություն: Լեզվի առաջացումը այս առումով նա չի դիտել որպես պատահական, բնածին հանգամանքներով պայմանավորված ինչ որ բան:

Սակայն նկատենք, որ թեև Ա. Բագրատունին արդի խոսակցական լեզվի արմատները աշխատել է գտնել կենդանիների բնական ճիշերի մեջ, այնուամենայնիվ չի կարողացել բացահայտել, թե ինչպես սկզբնական ազդանշանները, որոնք արտահայտում էին զգացական բովանդակություն, հետազայում ասոցիացիայի ենթարկվելով առարկաներից ստացված տպավորությունների հետ, դարձան նրանց նշանակումները: Նա չկարողացավ բացահայտել նաև այն պայմանները, որոնց առկայությամբ անցում է կատարվում բնական ճիշերից դեպի իսկական բառերը: Ինչ վերաբերում է լեզվի առաջացման «հասարակական դաշինքի» տեսությանը, ապա կարելի է նկատել, որ նախ՝ այս տեսությամբ լեզվի առաջացումը և զարգացումը Բագրատունին կապում է հասարակության հետ և երկրորդ՝ լեզվի առաջացման հիմքում դնում է մարդկանց իրար մի բան ասելու կարիքը: Սակայն լեզվի առաջացման «հասարակական դաշինքի» տեսությունը ուներ իր մեջ նաև լուրջ սահմանափակություններ: Այսպես, այս տեսության համաձայն մարդիկ լեզուն ստեղծել են կանխամտածված, նպատակադրված, գիտակցված ձևով: Մինչդեռ դա ճիշտ չէ և հակասում է նրա առաջացման պատմական իրողությանը:

Գիտությունը ցույց է տալիս, որ լեզվի առաջացումը տեղի է ունեցել տարերայնորեն, առանց մարդկանց սուբյեկտիվ ցանկության: Եթե անգամ ենթադրենք, որ այդ տեսությունը ճշմարիտ է, ապա պետք է ընդունենք, որ մինչև պայմանավորվելը և առարկաներին անուններ տալը մարդիկ օգտվել են բառային լեզվից, որովհետև պայմանավորվելու և անվանելու համար անհրաժեշտ էր, որ նրանք փոխանակեին իրենց մտքերը: Ստացվում է մի հակասություն՝ լեզու ստեղծելու համար մարդիկ պետք է ունենային լեզու: Այսպիսով ակնհայտ է, որ Բագրատունին, հարելով լեզվի ծագման «հասարակական դաշինքի» տեսությանը, պարզապես լեզվի ծագումը կտրել է մտածողությունից: Բայց հայտնի է, որ վերլուծելով լեզվի և մտածողության փոխհարաբերությունը և կիրառելով այն նրանց առաջացման պատմական պրոցեսի նկատմամբ, նա հանգեց միանգամայն այլ եզրակացության: Ա. Բագրատունին առաջ քաշեց նրանց միաժամանակյա առաջացման, միասնական լինելու գաղափարը: Ուրեմն, Ա. Բագրատունին, հարելով լեզվի ծագման «հասարակական դաշինքի» տեսությանը, պարզապես չի հասկացել, որ այն իր էությամբ ուղղված է լեզվի և մտածողության միաժամանակյա առաջացման գիտական տեսակետի դեմ:

Ի վերջո, անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսի՞ն էր սկզբնական խոսակցական լեզուն և ի՞նչ ուղղությամբ է ընթացել նրա հետագա զարգացումը, պետք է նշել, որ Բագրատունին այս հարցում կանգնած է եղել գիտական տեսակետի վրա: Արդի լեզվաբանությունը նույնպես այն կարծիքին է, որ նախնական լեզուն իր բնույթով եղել է դիֆուզ: Դա նշանակում է, որ նախնական լեզուն սկսվել է ոչ թե առանձին հոդարաշխ բառերից, այլ բառ-նախադասություններից ընդհանրապես: Արտաբերելով որևէ հնչյունական կոմպլեքս, մարդիկ արտահայտել են ոչ թե առանձին հասկացություն, այլ ամբողջական միտք: Մոտավորապես նույն բանը մենք տեսնում ենք դեռևս նոր խոսող երեխաների մոտ: Այդ նախնական բառ-նախադասությունը եղել է ոչ թե զոյական կամ բայ, այլ զոյական և բայ միաժամանակ, այսինքն՝ նշանակել է առարկան և գործողություն: Միասին վերցրած՝ Միայն հետազայում է, որ բառ-նախադասությունները սկսեցին տարբերակվել, գիտակցվել որպես առանձին-առանձին լեզվական միավորներ: Թեև Ա. Բագրատունին այս հարցում հիմնականում կանգնած էր ճիշտ տեսակետի վրա, այնուամենայնիվ նրա դատողություններից

պարզ չի դառնում, թե ինչպես սկզբնական հատուկ անուններից, որոնք նշանակում էին եզակի առարկաներ, տեղի է ունենում անցում դեպի բնդհանուր անունները:

Լեզվի մասին Ա. Բաղրատունու ունեցած հայացքների քննությունը ցույց է տալիս, որ նա եղել է ժամանակի նշանավոր մտածողներից մեկը: Իր բեղմնավոր գործունեության մեջ հանդես է եկել ոչ միայն որպես լուրջ փիլիսոփա, այլև լեզվի ականավոր տեսարան: Նրա այն միտքը, թե լեզուն հանդիսանում է հաղորդակցության կարևոր միջոց և որպես այդպիսին կապված է մտածողության հետ, կարևոր դեր է խաղում մտածողության առաջխաղացման ու իմացության մեջ²⁵ մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունը, հետաքրքրությունը: Ավելին, պետք է նշել, որ լեզվի և մտածողության փոխհարաբերության, ինչպես նաև այս հարցում եղած զանազան մետաֆիզիկական կոնցեպցիաների քննադատությամբ նա շատ առաջ դնաց իր ժամանակի լեզվաբանության մակարդակից: Այս կապակցությամբ անդրադառնալով հայ լեզվաբանության պատմության մեջ Արսեն Բաղրատունու դրաված տեղին, պետք է նշել, որ լեզվի փիլիսոփայական հարցերի ուսումնասիրության առաջին լուրջ փորձը նրան է պատկանում: Եթե այս բոլորին ավելացնենք նաև այն, որ բացի լեզվի բնդհանուր փիլիսոփայական հարցերից նա զբաղվել է նաև հայոց լեզվի զարգացման առանձնահատկությունների խնդիրներով, ձգտել է տալ VII—XIII դարերում նրա մեջ կատարված էվոլյուցիոն փոփոխությունների նկարագիրը, ապա միանգամայն հասկանալի կդառնա, որ նրա վաստակը մեծ է եղել հայ լեզվաբանության պատմության մեջ: Խոսելով Ա. Բաղրատունու «Հայերեն քերականութիւն ի պիտս զարգացելոց» աշխատության մասին, ակադեմիկոս Հ. Աճառյանը գրել է, որ այն «...մի զանձարան է է—Ժ-ր դարերի հայերեն լեզվի. այնտեղ կարելի է գտնել հայ լեզվի ամեն շրջանների վիճակը, թեև առանց գիտական և կանոնավոր համակարգության»²⁵:

²⁵ Հ. Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ Ա, Վաղարշապատ, 1906, էջ 80: